



ՀԱՐԱՏԱԳ ԼՈՒՐԻՑ: New York Times Պատմական նախադեպ... «Չըզգայալ» իրախային ընակակայրերը վերանան Ե արգիլուան գտրիի»

Գլխավոր > Գեորգ Արապեանի թարմ յիշատակին



Գարոցաշեն բարերարին հետ կատարուան հարցազրոյցի մը հետքերով
Յուլիս 3-ին, Լիբանանի Այնճար հայկական աանկին մեջ մահացաւ Լիբանանի եւ Ֆրանսայի մեջ հայկական դպրոցներու բարերար Գեորգ Գայի Արապեանը, 91 տարեկանին: Ան բարերարն է Ֆրանսայի Աֆորիլի եւ Վալանս քաղաքներու հայկական վարժարաններուն:

Իր ներդրումով վերանորոգուան է Լիբանանի Այնճար հայկական աանկի Ազգային «Յառաջ – Գ. Կիլպէնկեան» վարժարանը, իսկ վերանորոգուան մանկապարտեզի ծաղկոցը կը կրէ իր անունը:

Գեորգ Արապեանի հարցը՝ «այց Արապեան, ծնած էր Կոստանիա: Հայերու դէմ հալածանքներու պատճառով 1896-ին Արապեան գերդաստանը կը ստիպուի լքելու Կոստանիան եւ կը հաստատուի Արշէհիլի ուր եւ Հայց Արապեան Կոնստանտնուպոլիսի մարիամի հետ ու կը իրազեկ ընտանիք: 1914-ին կը ծնի Բիւզանդը, որ ծանօթ է Ֆրանսահայութեան: 1915-ին, Հայոց ցեղասպանութեան օրհուսական օրհուրուն, ընտանիքը կը տարագրուի Տէր Զօր: Այստեղ կը ծնի Գեորգ Արապեանի երկրորդ յղայարը՝ Կարապետը: Կարճ ատեն մը հանգիստ կեանք ունենալէ հոգը, Հալէպի մեջ ալ հալածանքներու ենթարկուելով, կը ստիպուի Արշէհիլի վերադառնալ, պահ մը յուսարով, որ հոն կրնան շարունակել իրենց նախնին կեանքը: Բայց մեծ կ'ըլլայ իրենց յուսախաբանութիւնը որովհետեւ կը տեսնեն թէ ամէն բան փոխուան է եւ անկարելի՝ կրտսեանը վերագտնելը: Այնտեղ երկու տարի անալէ հոգը, Արապեան գերդաստանի անդամները միանգամ ընդմիջող կը բաժնուին, իւրաքանչիւրը իր ճամբան ընտրելով դէպի Յունաստան, Արժանեփին, Պոլիս, Լիբանան, Ֆրանսա:

Գեորգ Արապեանի հարցը 1923-ին ընտանեօց կը փոխադրուի Պէրոպ, բնակութեան համար կ'ընտրեն թաղամաս մը, ուր կը տեսնեն թէ՛ հայկական ենեղեցի եւ դպրոց կայ: Դո՛ւս է որ 1932-ին կը ծնի Գեորգ Արապեան: Գետազային, Գայի գաւաակները Պէրոպի մեջ կը հիմնեն թուրքէ տոպարակի արտադրանասն եւ կը դառնան յաջող ու երեսնի անտարակականեր:

Երկու տարի առաջ, երբ Լիբանանէն պիտի մեկնէի Փարիզ, «Սուրբ Մեսրոպ – Արապեան» վարժարանէն ներս վարչական եւ կրթական պաշտօն ստանձնելու համար, չէի ճանչնար պարոն Արապեանը:

Գիտնալով, որ վարժարանին բարերարը կ'ապրէր Լիբանանի Այնճար հայկական աանկը, փախաբեցայ անոր հետ ունենալ հարցազրոյց մը՝ աւելի մօտէն ծանօթանալու համար հայկական դպրոցաշինութեան գործին այնքան մեծ նպաստ բերան անձնաւորութեան: Այսօր, անոր մահէն ետք, յարմար կը նկատեմ ձեզի հետ կիսել այդ մտերմիկ խօսակցութեան բաժիններ՝ իբրեւ քաղուածք մը իր մտքերուն եւ յուշերուն:

Ն.Ն.

– Ինչպէ՛ս դուք ձեզ կը ներկայացնէիք. ո՛վ է Գեորգ Արապեանը, ձեր կեանքին հանգրուանները, ձեր անիքը, ասպարեզը...: Ինչ՞ու եւ ինչպէ՛ս որոշեցիք օժանդակել Ֆրանսահայ դպրոցի մը:

Ես մեծցած եմ հայկական միջավայրի մեջ, հայրս Պէրոպի կեղոնը, Parliament-ին դիմաց, խանութ մը ունէր. մայրս հայրենասէր կին էր, մեզ հայ մեծցուց, հայ դաստիարակեց, ունէր երկու եղբայրներ, որոնք բարձր ուսումի հետեւեցան: Իմ առաջին դպրոցս՝ մանկապարտեզը եւ նախակրթարանը, Սուրբ Նշան վարժարանն էր, յետոյ, 6-րդ դասարանէն ետք, ուսումն շարունակեցի Գայ Անտ. վարժարանին մեջ (High School): Դո՛ւս մնացի չորս-հինգ տարի, բայց երբ հայրս հիւանդացաւ, ստիպուան եղայ ստանձնել իր գործը՝ նկատի ունենալով, որ եղբայրներս կը շարունակէին իրենց բարձրագոյն ուսումը: Դօրս խանութին մեջ մնացի քանի մը տարի. երբ եղբայրներս իրենց ուսումը աւարտելով նոր գործի մը սկսան, ես ալ միացայ իրենց: Կը գրադիւնք թուրքէ emballage-ներու վաճառականութեամբ:

Մեր գործերը յաջող ընթացան եւ յառաջ գացին. այս մեկը մեզի կարողութիւն տուաւ արտաքին աշխարհին հետ աշխատելու եւ ներդրումներ ընելու: Եղբայրներու մահէն ետք առանձին շարունակեցի գործը: Գործի սալոնները պատճառ եղան, որ մեծ գումար անցնի ձեռքս, եւ երբ Ֆրանսա ապրող բարեկամներս ինձի հետ կ'ապ հաստատեցին, առաջարկելով օգտակար դառնալ հայ դպրոցին՝ չվարանեցայ:

Ես Ֆրանսա ապրան էի արդէն մօտ քսան տարի. բարեկամներ հեռանայնեցին եւ ըսին, թէ դպրոց շինելու աշխատանք մը ձեռնարկան են: Առանց տատանելու եւ առանց որեւէ հարցում հարցնելու՝ «այո՛» ըսի:

– Դպրոց հայկական ինքնութիւնը պահպանող հիմնական միջավայրերէն մեկն է: Ձեր վեճանձն նուիրատուութեամբ փաստան էք արդէն այս տեսակետին նկատմամբ ձեր համոզումը: Ի՞նչ ունիք անեցնելիք:

Իմ հայկական ինքնութիւնը, ընտանիքս ետք, կերտուան է հայ դպրոցին մեջ. ես ունեցան եմ հայագետ ուսուցիչներ, որոնք մեզի պարտադրան են հայերէնը սիրել, հայ մշակույթին եւ պատմութեան տեր ըլլալ: Ինչպէս ըսի, ես ապրան եմ Ֆրանսայի մեջ, հոն կան քաղաքներ, ուր 10.000-է աւելի Գայեր կ'ապրին, բայց հոն դպրոց չունիք: Եղան եմ հիւսիսային Անտրիպ, հարաւային Անտրիպ, Երուպա, ուրիպան եւ ընտանիքներու, որոնք զաւանթերը հայերէն չեն խօսիր: Գայ դպրոցը այն վայրն է, ուր մեր զաւանթերը հայերէն կրնան խօսիլ. անշուշտ հայերէն չեն խօսել: Գայ պէտք է նաեւ սորվիլ պատմութիւն, հայկական մշակույթ, երգ, արտաստութիւն: Դպրոցի կողքին պէտք է գարկ տալ արտադրողական հայկական կեանքին՝ ստեղծելով տիկնանց, օրիորդաց յանձնախումբեր, աշակերտական ակումբներ, որպէսզի ըզվ-ըզվի գան, միասին աշխատին, հայերէն խօսին, ընկերային մթնոլորտ ստեղծեն, որպէսզի մեր երիտասարդները իրարու ծանօթանան եւ ինչու չե՛՞ ամուսնութիւններ կնքեն եւ ընտանիք կազմեն:

Ֆրանսայի մեջ շատ ընդհանրացան է հայկական պար սորվիլը, այս մեկը թա՛ է. բայց ասոր կողքին պէտք է թատրոնի խումբեր հիմնել, ասումը սորվիլ, պատմութիւն սորվիլ:

– Ինչպէ՛ս կը պատկերացնէք այսօրուան հայկական դպրոցը սփիւռքի (Ֆրանսայի) տարածքին:

Ես գիտեմ, թէ մեր ուսանողները Brevet-էն ետք Bac առնելու համար օտար վարժարան կ'երթան, ուր պրոբն առիթ չունին հայերէն խօսելու: Պէտք է մեր բոլոր դպրոցները միկնել Bac ըլլան, որպէսզի մեր աշակերտները հայկական միջավայրի մեջ մնան, հայերէն լսելու եւ խօսելու առիթ ունենան: Ինչ կը վերաբերի մանկապարտեզին, առաջարկս է, որ մանկապարտեզին մեջ գոնէ երկու տարի խօսուող եւ դասաւանդուող լեզուն միայն հայերէն ըլլայ, որովհետեւ մանկապարտեզին մեջ է, որ կը դրոպին մանուկի մը կրթական կեանքին հիմքերը:

Դժգոհիկները պէտք է առիթ ունենան ըզվ-ըզվի գալու, խումբեր կազմելու, միասին դաս սորվելու: Սարգսնը ալ շատ կարեւոր է, մարզական կեանք պէտք է ստեղծել: Այս է իմ վերջին փափագը: Մանուկը չի գիտեր, ծնողը պէտք է այս քայլը առնէ եւ իր գաւակը հայկական միջավայր առաջնորդէ:

Նիկոլը՝ «Նոր Յառաջ»-էն

Social media sharing buttons for Telegram and YouTube

Առնչուող լուրեր

- 16/03/2024 Գրիգոր Գապագեանի յիշատակին
11/03/2024 Այնճարէն ՚Երուսաղէմ ու Գանատա. Վարուժան...
02/03/2024 «Մասն լոյսով ու խաղաղութեամբ անջաւէտ.....
01/03/2024 Յարգանքի տուրք՝ 2008-ի մարտ 1-ի զոհերու...

Կիսուկի social media icons

News carousel with images and headlines: Թողուան, Միացական Աշխարհ, Հայաստան, հասարակ, Մարտի 28/03/2024, Մարտի 28/03/2024, Մարտի 28/03/2024